ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 135-Ա/3 «25» 04. 2025թ.

ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/52» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված բժշկական կահույքի (11 դպրոցի համար) գնման գործընթացին 9-րդ չափաբաժնի համար հայտ ներկայացրած Հրաչյա Վարդանյան Ա/Ձ-ի հայտում բացակայում էր 9-րդ չափաբաժնի Տեխնիկական բնութագրերին կից Տեխնիկական-առաջադրանք-9-ը, որը անհամապատասխանությունը շտկման հնարարավորություն տալուց հետո կրկին չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին՝ ներկայացվել է թերի, ինչի արդյունքում ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն գնահատող հանձնաժողովը 14.04.2025թ որոշմամբ մերժել է վերջինիս հայտը, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հրաչյա Վարդանյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 48039802, գործունեության հասցեն՝ ք. Վեդի, Պ. Սևակի 6) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Recoverable Signature

X

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ